# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 օգոստոսի 2020թ. N 240-Ա

ՊԱՏՇԳԱՄԲԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի և հիմք ընդունելով Ասյա Գալուստի Կաղյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Թույլատրել Ասյա Գալուստի Կաղյանին կատարելու իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 18 շենք 24 բնակարանի (վկայական՝ N31102013-07-0028, տրված 2013 թվականի հոկտեմբերի 31-ին) պատշգամբի ընթացիկ նորոգում թեթև կոնստրուկցիաներով՝ առանց նախագծային փաստաթղթերի:

2. Ասյա Գալուստի Կաղյանին՝ համայնքապետարանի 900105202098 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ՝ ընթացիկ նորոգման թույլտվության ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстанавливаемая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALAYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՅԱՆ

2020թ. օգոստոսի 10
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2020թ. N 241-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Լիլիթ Սամվելի Ծատուրյանի դիմումը՝ *որոշում եմ*.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 33/78 (ծածկագիր՝ 07-003-0037-0041, վկայական N 22102019-07-0074) հասցեի հասարակական կառուցապատման հողամասում 1 (մեկ) հարկանի հասարակական նպատակային նշանակության խանութ կառուցելու նպատակով Լիլիթ Սամվելի Ծատուրյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:

2.Լիլիթ Սամվելի Ծատուրյանին՝ համայնքապետարանի 900105202247 հաշվեհամարին վճարել 15 000 (տասնհինգ հազար) դրամ՝ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Электронная подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Подписано: BALASYAN HAKOB 3009590148    Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 11
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 օգոստոսի 2020թ. N 242-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերի ու հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու Անի Շիրակի Խանզադյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1.Բյուրեղավան քաղաքի «Հայրենադարձ» թաղամասի ճանապարհին գտնվող (վկայական՝ 026243, տրված՝ 1998 թվականի օգոստոսի 21-ին) անշարժ գույքին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 1-ին փողոց 38/1:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Подписано: BALASYAN HAKOB 3009590148    Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 11
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2020թ. N 243-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ ու 55-րդ կետերի և հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու Գուլչիդ Սերգեյի Զարգարյանի լիազորած անձ Միտյա Վլադիմիրովիչ Բաբախանովի դիմումը՝ *որոշում եմ*.

1.Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի 4-րդ թաղամասի թիվ 32 (ծածկագիր՝ 07-051-0153-0032) հասցեի անշարժ գույքը վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Սևան թաղամաս 4-րդ փողոց 32:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 12
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2020թ. N 244-Ա

## ՊԱՏՇԳԱՄԲԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի և հիմք ընդունելով Արմիկ Օհանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Թույլատրել Արմիկ Օհանյանին կատարելու իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան, Կոտայքի փողոց 28 շենք թիվ 60 բնակարանի (վկայական՝ 884912, տրված 2003 թվականի ապրիլի 18-ին) պատշգամբի ընթացիկ նորոգում թեթև կոնստրուկցիաներով՝ առանց նախագծային փաստաթղթերի:

2.Արմիկ Օհանյանին՝ համայնքապետարանի 900105202510 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ՝ ընթացիկ նորոգման թույլտվության ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 12
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2020թ. N 245-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հաշվի առնելով, որ այգետնակը, օժանդակ շինությունը, ծածկը, ջրավազանը, սանհանգույցը, աստիճանը, հենապատերն ու պարիսպը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հատկացված 0.05 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.0025 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2020 թվականի հուլիսի 08-ին տրված N Ար-1340 արխիվային տեղեկանքը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Սարգիս Մարտիրոսի Ղալեչյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի թիվ 2 տեղամասի թիվ 25 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Ուրց թաղամաս 2-րդ փողոց 25:

2.Ճանաչել Սարգիս Մարտիրոսի Ղալեչյանի (ծնված՝ 1937 թվականի նոյեմբերի 20-ին) սեփականության իրավունքը իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.05 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0124-0036) փաստացի ավել օգտագործվող 0.0025 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3.Սարգիս Մարտիրոսի Ղալեչյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Ուրց թաղամաս 2-րդ փողոց 25 հասցեի 0.0525 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 200.27 քմ արտաքին (167.18 քմ ներքին) մակերեսով այգետնակը, օժանդակ շինությունը, ծածկը, ջրավազանը, սանհանգույցը, աստիճանը, հենապատերն ու պարիսպը ճանաչել օրինական:

4.Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.0525 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Հաստատել որոշման անբաժանելի մասը կազմող «ԷՐԻՑՈՒԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված ընդհանուր 0.0525 հեկտար մակերեսով վերոնշյալ հողամասի ու շինությունների հատակագիծը:

6.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար :

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 12
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2020թ. N 246-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ 49 ՇԵՆՔԻ N 40 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԱԶԱՏ ԱՐԻՍԻ ՄԱԿԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի մայիսի 23-ի N 59-Ա որոշումը, համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը, Աշոտ Արիսի Մակարյանի և Մարինե Ցոլիկի Մակարյանի N 401314 ամուսնության վկայականը և Մարինե Ցոլիկի Մակարյանի ԲԱ280030 մահվան վկայականը ՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի 13.77 քմ ընդհանուր մակերեսով N 40 բնակարանը (նախկին 1-ին հանրակացարան 31 սենյակ) անհատույց օտարել Աշոտ Արիսի Մակարյանի չորս անձից բաղկացած ընտանիքին.
ընդհանուր բաժնային սեփականատերեր համարել՝
Աշոտ Արիսի Մակարյանին՝ ծնված 1967 թվականի օգոստոսի 29-ին,
Գրետա Աշոտի Մակարյանին՝ ծնված 1998 թվականի փետրվարի 18-ին,
Գոռ Աշոտի Մակարյանին՝ ծնված 2005 թվականի փետրվարի 25-ին,
Դավիթ Աշոտի Մակարյանին՝ ծնված 2007 թվականի հոկտեմբերի 14-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Աշոտ Արիսի Մակարյանի կողմից:

3.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական,

նկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Վոլոդյա Հայրապետյանին (նույնականացման քարտ՝ 006343479, տրված՝ 07 սեպտեմբերի 2017 թվականին 059-ի կողմից, ծնված՝ 1973 թվականի դեկտեմբերի 11-ին)՝ կատարել Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի 40 բնակարանը Աշոտ Արիսի Մակարյանի ընտանիքին անհատույց օտարելու (նվիրելու) հետ կապված գործարքներ և կնքել նվիրատվության պայմանագիր:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 12
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2020թ. N 247-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 411-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Սուսաննա Խեչումյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 16-ի «Անշարժ գույքը վերահասցեավորելու մասին» N 411-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 1-ին կետում «Զորավար Անդրանիկի փողոց» բառերը փոխարինել «Ամառանոցային փողոց» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстанавливаемая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 13
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2020թ. N 248-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 12 ՇԵՆՔԻ ԹԻՎ 1 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Անդրանիկ Ռուբենի Պողոսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Անդրանիկ Ռուբենի Պողոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 12 շենքի թիվ 1 բնակարանի (վկայական՝ 0167151, տրված 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց 12 շենք 1 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

подпись

X

Подписано: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 13
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2020թ. N 249-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հաշվի առնելով, որ հատկացված 0.05 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.0089 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2020 թվականի հուլիսի 27-ին տրված N Հ-9323 արխիվային տեղեկանքն ու Գուրգեն Տոսիկի Տեր-Ղազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի թիվ 7-րդ զանգվածի թիվ 14 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Հայմարմառ թաղամաս 7-րդ փողոց 14:

2.Ճանաչել Գուրգեն Տոսիկի Տեր-Ղազարյանին (ծնված՝ 1949 թվականի փետրվարի 01-ին) սեփականության իրավունքը իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.05 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0150-0025) փաստացի ավել օգտագործվող 0.0089 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3.Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.0589 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված ընդհանուր 0.0589 հեկտար մակերեսով վերոնշյալ հողամասի հատակագիծը:

5.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 13
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2020թ. N 250-Ա

### ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի ու հիմք ընդունելով Սերգեյ Սամվելի և Գոհար Վոլոդյայի Սարգսյանների համատեղ հայտը՝ *որոշում եմ.*

1.Սերգեյ Սամվելի և Գոհար Վոլոդյայի Սարգսյաններին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ իրենց սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 27/98 (ծածկագիր՝ 07-003-0037-0138, վկայական N 13052013-07-0063 հասցեի հասարակական կառուցապատման հողամասում 1 (մեկ) հարկանի հասարակական նպատակային նշանակության ավտոտեխսպասարկման կայան կառուցելու նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Սրգեյ Սամվելի Սարգսյանին ու Գոհար Վոլոդյայի Սարգսյանին՝

1)նախագիծը ներկայացնել համաձայնեցման.

2)կառուցապատման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից։

Восстановимая подпись

X

Подписано: BALAYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՅԱՆ

2020թ. օգոստոսի 13
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2020թ. N 251-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐԴԱՆՈՑԸ, ՋՐԱՎԱԶԱՆԸ, ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ, ԾԱԾԿԵՐԸ, ՋՈՒԳԱՐԱՆԸ, ՊԱՐԻՍՊՆ ՈՒ ՀԵՆԱՊԱՏԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-11-րդ և 13-րդ կետերի և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հաշվի առնելով, որ խորդանոցը, ջրավազանը, աստիճանները, ծածկերը, պարիսպն ու հենապատը կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և հիմք ընդունելով թիվ 2499144 սեփականության վկայականը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Ցոլակ Սնյրանի Հայրապետյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 1 շարք թիվ 12 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 1-ին փողոց 12:

2. Ցոլակ Սնյրանի Հայրապետյանին, Սերգեյ Սնյրանի Հայրապետյանին և Մարինե Ցոլիկի Գաբրիելյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող

Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 1-ին փողոց 12 հասցեում գտնվող 0.05 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում (ծածկագիր՝ 07-003-0040-0052) ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 130.2 քմ արտաքին (111.77 քմ ներքին) մակերեսով խորդանոցը, ցրտավազանը, աստիճանները, ծածկերը, պարիսպն ու հենապատը ճանաչել օրինական:

3.Յուրի Սեյրանի Հայրապետյանին, Սերգեյ Սեյրանի Հայրապետյանին և Մարինե Ցոլիկի Գաբրիելյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 273420 (երկու հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր քսան) դրամ սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 130.2 քմ արտաքին (111.77 քմ ներքին) մակերեսով խորդանոցի, ցրտավազանի, աստիճանների, ծածկերի, պարսպի ու հենապատի օրինականացման վճար:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Հաստատել որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված հողամասի ու շինությունների հատակագիծը:

6.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Электронная подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALAYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՅԱՆ

2020թ. օգոստոսի 14
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2020թ. N 252-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցված է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, կառուցված չի ու չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հատկացված 0.05 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.00999 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2014 թվականի մայիսի 26-ին տրված N Հ-3571 արխիվային քաղվածքը, ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրերը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Հասմիկ Վանիկի, Մինաս, Գոռ և Անի Շիրակի Խանզադյանների համատեղ դիմումը՝ *որոշում եմ.*

1.Աբովյանի շրջանի Նուռնուս այգետարածքի թիվ 2 տեղամասի թիվ 60 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Ուրց թաղամաս 2-րդ փողոց 60:

2.Ճանաչել Հասմիկ Վանիկի, Մինաս, Գոռ և Անի Շիրակի Խանզադյանների սեփականության իրավունքը իրենց սեփականության իրավունքով պատկանող 0.05 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0128-0015) փաստացի ավել օգտագործվող 0.00999 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3. Հասմիկ Վանիկի, Մինաս, Գոռ և Անի Շիրակի Խանզադյաններին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Ուրց թաղամաս 2-րդ փողոց 60 հասցեի 0.05999 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 78.4 քմ արտաքին (68.4 քմ ներքին) մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:

4.Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.05999 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «Արմեն Ակոբյց» անհատ ձեռնարկատիրոջ տված ընդհանուր 0.05999 հեկտար մակերեսով վերոնշյալ հողամասի ու շինությունների հատակագիծը:

6.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

...имая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ...BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 14
ք. Բյուրեղավան

Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 16 13 օգոստոսի 2020թ.

Օբյեկտ 1 (մեկ) հարկանի հասարակական նպատակային նշանակության ավտոտեխսպասարկման կայան կառուցում

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերանորոգում, գործառնական նշանակության փոփոխություն)

(հակիրճ բնութագիրը, հզորությունը)

նախագծային փաստաթղթերի մշակման համար:

«Աշխատանքային նախագիծ», (II կատեգորիա), միջին բարդության սահման

(բարդության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Ջրավազ Աղբյուրին փողոց 27/98 հասցեի հասարակական կառուցապատման հողամաս

(մարզը, համայնքը, փողոցի անվանումը, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Սերգեյ Սամվելի Սարգսյան, Գոհար Վոլոդյայի Սարգսյան (ք. Բյուրեղավան 32շ.40բն.) հեռ.094606967

(բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը սեփականության վկայական N13052013-07-0063

(կառուցապատման նախաձեռնության ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կառուցապատման հայտ, հողամասի հատակագծին օբյեկտի առաջարկվող տեղադիրմամբ, էսքիզային նախագիծ

(կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող սխեմայի միջոցով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է — Բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման տարածք.

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը — ծածկագիր՝ 07-003-0037-0138, 0.008հա. հող



(հողամասի սահմանները կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը — ազատ, հարթ, անկառուցապատ տարածք

(շենքերի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները — համայնքային նշանակության ճանապարհ.

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության — հարակից տարածքով անցնող ստորգետնյա մայրուղ, ջրագիծ, կոյուղագիծ, էլեկտրամատակարարման,էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր, գազամատակարարման համակարգ

համակարգեր)

(նախագծվող հողամասում կամ նրա սահմանին անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում` ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր — համայնքային սեփականության հող, ճանապարհ
(կից հողօգտագործողների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) — ---------------
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ — նախագծերը մշակել համաձայն տրված առաջադրանքի
(տեղադրում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում` սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է նաև ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ — ընկալումը ՀՀ գործող նորմերին համապատասխան, բոլոր միջավայրի պայմանների, հաշվի առնել միջավայրի քաղաքաշինական առանձնահատկությունները, հատակագծային լուծումները բոլոր պատվիրատուի առաջադրանքի, տանիքի գույն RGB RAL 159-51-33 3016 49/31980, բոլոր մասնակցման պահանջներ սահմանող ուղեցույցի, կառուցվող նախագծի վերաբերյալ
(երկրով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, ասկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կառուցվող (վերակառուցվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից առաջացող ծավալատարածական լուծումների, նյութերի, գույների, արտաքին հարդարման, տեղեկատվական ցուցանակների և գովազդի միջոցների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) — *Սարահովտի փողոցի կառուցապատման գիծ*

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) — ------

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) — սահմանային հարկայնության բարձրությունը սահմանվում է շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ 3-6.02-2006 «Քաղաքաշինություն. Բնակավայրերի նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հարկայնության միջոցներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն) — կեցցեն h=3.5մ, մինչև առանցք H=4.5մ

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) — 1

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անշրջանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով) (%) — 100%

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով) (%) — 0-%

9.7. այլ պահանջներ — տարածքում տեղադրել հեռուստացույցին վարսավառ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների — ---------

| | |
|---|---|
| [illegible] | |
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | ______________---------______________ |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | Պահանջներ՝ գործող ցանցերի և նախատեսվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ<br>*համաձայնեցնել [illegible] կազմակերպությունների հետ* |
| 12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում | Կցվում է «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերություն<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2. (*) էլեկտրամատակարարում | Կցվում է «ՀԷՑ» ՓԲԸ «ԽՄՄ» տնօրինության «Նաիրի» էլեկտրական ցանցեր<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3. (*) գազամատակարարում | Կցվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արտաշատի ԳԳՄ<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխային կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | Կցվում է ____________<br>(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կցվող տվյալների) |
| 12.5. թույլ հոսանքներ | ___ ____________ |
| 12.6. աղբահանություն | Կնքել համապատասխան պայմանագիր աղբահանություն կազմակերպող իրավասու կազմակերպության հետ |
| 13. Տարածքի ինժեներական նախապատրաստում | «Քաղաքաշինական կառուցապատում և բարեկարգում» 2019 կազմակերպված ջրահեռացում<br>(տեղումների կազմակերպված, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները) |
| 14. Բարեկարգում | ապահովել հարակից տարածքի մաքրությունը, կանաչապատումը, բարեկարգումը<br>([illegible], կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, լուսավորում և այլն) |
| 15. Շինարարական նյութեր | Քար, երկաթբետոն, տուֆ, բազալտ, կոմպոզիտ, [illegible], ապակի, փայտ, [illegible], թիթեղ և այլ բոլոր համապատասխանող նյութերը<br>(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները [illegible]) |
| 16. Պաշտպանական կառույցներ | Շինարարության ընթացքում ցանկապատել տարածքը և ստեղծել անհրաժեշտ այլ պաշտպանական միջոցներ<br>(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները) |
| 17. Հակահրդեհային պահանջներ | ապահովել հակահրդեհային նորմերով պահանջները<br>(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները) |
| 18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ | ____________ |
| 19. Շրջակա միջավայրի պահպանում | Չիրականացնել վնասակար միջոցառումներ, որը կբերեն բացասական ազդեցության շրջակա միջավայրի վրա, ըստ գործող նորմերի<br>(շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունից բացառելու միջոցառումները) |
| 20. Շինարարության կազմակերպում | [illegible]<br>([illegible]) |
| 21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման | ________ «Ճարտարապետաշինարարական նախագիծ» , 12 (տասներկու) ամիս |

փուլերը

([illegible])

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան

([illegible])

23. Միջանկյալ համաձայնեցում

______________________________

([illegible])

24. Հասարակական քննարկումներ

ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների համաձայն

([illegible])

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

Նախագիծը համաձայնեցնել [illegible] Բյուրեղավան[illegible] [illegible] ենթակառուցվածքի [illegible] սեփականատիրոջ (օգտագործողի) հետ՝ [illegible]

([illegible])

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

______________________________

27. Այլ պայմաններ

______________________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.

Ն. Դանիելյան

հեռ. 0222 6 52 03

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**<u>ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ</u>**

(ՀՀ մարզ, համայնք)

**<u>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ</u>**

**N10 11 օգոստոսի 2020 թ.**

Տրված է կառուցապատող *Լիլիթ Սամվելի Ծատուրյան (ք. Բյուրեղավան 18շենք. 29բն.),* հեռ.094639590 ին
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

*Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 33/78 հասցեի հասարակական կառուցապատման հողամասում 1 (մեկ) հարկանի հասարակական նպատակային նշանակության խանութ կառուցելու (ծածկագիր՝ 07-003-0037-0041 ) (II կատեգորիա) միջին ռիսկայնության աստիճան* օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

__________ ____________ շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝ (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների ____________
---------------------- տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են Ա/Ձ ԿԱՐՈ ՂԱԶԱՐՅԱՆ -ի
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների
*(արտոնագիր ՃԲԴ –Ա-0116, ԿԵԴ-Ա2-026)* կողմից.
կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) ___. ____.*2020թ . N*____ փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)
(նշել փորձաքննության տեսակը)

\- կողմից
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ երաշխավորագիր N20-11 տրված 11.05.2020թ.,
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների Բյուրրեղավան համայնքի հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 24 ամսվա ընթացքում՝
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝
[] ավարտական ակտի տրամադրումից----------------------- ամսվա ընթացքում
[+] ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 14 թերթից, կարված և դրոշմակնքված է Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից:
(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում) ______________________________________ կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի ______________________________________ և այլ

(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների ______________________________________ հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը ______________________________________

______________________________________:

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա ______________________ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) ______________________ քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) ______________________________________ տրված սույն

(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ <u>նախագծային փաստաթղթերի և շինարարական աշխատանքների վերաբերյալ տարածքում տեղադրել ինֆորմացիոն վահանակ և շինարարության ընթացքում ցանկապատել տարածքը</u>:

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ. Դ. Դանիելյան
Հեռ. 022265205